

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒՆ

Հայտարարվում է մրցութիւն ՀՀ Շիրակի մարզի «Անուշավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր աշխատատեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցութի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի :

Մրցութին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձեզ 1/,

2. Փաստաթուղթ /դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճեն,

4. Ինքնակենսագրություն /Ձեզ 4/,

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճեններ / դրանց առկայության դեպքում/,

6. Մեկ լուսանկար,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2018թ. սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցութի տեղի կունենա 2018թ. սեպտեմբերի 20-ին՝ ժամը 11:00-ին ՀՀ Շիրակի մարզի Անուշավանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /094/ 91 48 17 հեռախոսահամարով: